# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՄ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԴԵՍՊԱՆԻ ԱՅՑԸ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

30.05.2014

ՀՀ Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանը մարզպետարանում ընդունել է Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակության ղեկավար դեսպան Տրայան Հրիստեային:
Պատվիրակության ղեկավար դեսպանին ուղեկցել են ՀՀ-ում Լիտվայի արտակարգ և լիազոր դեսպան Էրիկաս Պետրիկասն ու Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի երևանյան գրասենյակի ղեկավար Մարկ Դեվիսը:
ՀՀ Կոտայքի մարզպետն ու ԵՄ ղեկավար դեսպանը քննարկել են փոխհամագործակցությանը վերաբերող մի շարք հարցեր: